Հայկական Բժշկական Ինստիտուտ

Ուսանողական Խորհուրդ

Կանոնադրություն

Երևան 2014

Ուսանողական Խորհրդի կանոնադրություն

1. Ընդհանուր դրույթներ
   1.1. ՀԲԻ ուսանողական խորհուրդը (այսուհետ նաև՝ ՈՒԽ) սովորողների ներկայացուցչական, ինքնակառավարման, նրանց շահերը ներկայացնող բարձրագույն ընտրովի մարմին է. որը ստեղծվում է ժողովրդավարության, ինքնավարության, իրավահավասարության, կամավորության սկզբունքներին համապատասխան:
   1.2. Ուսանողական խորհուրդը իր գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը , սույն կարգին և իր կանոնադրությանը համապատասխան:
   1.3. ՈւԽ-ն կարող է ունենալ իր անվամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ, որոնք հաստատվում են ընդհանուր ժողովի կողմից:
   1.4. Խորհուրդը պարտավոր է արտահայտել և պաշտպանել ուսանողության շահերը, նպաստել նրանց հասարակական , մշակութային, բարոյական և հոգևոր զարգացմանը:
   1.5. ՈւԽ-ն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել Հայաստանի և օտարերկրյա կրթական հաստատությունների սովորողների ինքնավարության մարմինների և այլ կազմակերպությունների հետ:
   1.6. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՈւԽ-ն կարող է զբաղվել հրատարակչական գործունեությամբ, հրապարակել ամսագրեր, պարբերականներ և այլն:
2. Ուսանողական խորհրդի նպատակները և խնդիրները.
   2.1. Ապահովել սովորողների իրավունքների և շահերի պաշտպանությունը:
   2.2. Հասարակականկյանքում սովորողների սոցիալական դերի և ակտիվության բարձրացմանը, մասնագիտական, հոգևոր և ստեղծագործական զարգացմանը նպաստելը:
   2.3. Հաստատությունում ժողովրդավարության սովորողների ինքնադրսևորման և ինքնակառավարման կարողությունների զարգացմանը նպաստելը:
   2.4. Ուսանողների առողջության, կյանքի անվտանգության, սոցիալական ապահովության ուղղությամբ իրականացվող միջոցառումներին աջակցելը և սովորողների նախաձեռնություններին օժանդակելը:
   2.5. Սովորողների պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական, ժողովրդավարական պետության կառուցմանը օժանդակելը:
   2.6. Հաստատուն կապեր, գործնական փոխհարաբերություններ ՀՀ և արտերկրի բժշկական, գիտական, ուսանողական, երիտասարդական, կրթական, մշակութային և այլ կազմակերպությունների հետ:
   2.7. Խորհրդարանը մշակում և ինստիտուտի ղեկավար մարմիններին է ներկայացնում ուսումնական կյանքին և ուսումնակրթական գործընթացներին առնչվող հարցեր , ծրագրեր որոշումների նախագծեր և նպաստում դրանց ընդունմանն ու հետևողական իրականացմանը:
3. Կառուցվածքը և գործունեությունը
   3.1. Խորհուրդը ձևավորվում է ներկայացուցչական ընտրությունների սկզբունքով: Յուրաքանչյուր ֆակուլտետային կուրս խորհրդում ունի 1(մեկ) անդամ, խորհրդի

անդամները առաջադրվում են կուրսերում, ընտրված է համարվում այն թեկնածուն, որի օգտին քվեարկել են առավել շատ ուսանողներ:

3.2. Կուրսի կողմից ընտրված խորհրդի անդամի լիազորությունների ժամկետը 2(երկու) տարի է: Նույն անձի վերընտրման դեպքում նրա լիազորությունների ժամկետը 3 տարի է:

1. Հետդիպլոմային ուսուցում անցնող խորհրդարանի անդամի լիազորությունների ժամկետը 2 տարի է:Վերընտրման դեպքում լիազորությունների ժամկետը 2 տարի է:
2. Խորհրդարանի անդամ սփյուռքահայ և արտասահմանցի ուսանողների ժամկետը 2 տարի է:

3.3. ՈՒԽ անդամների իրավունքները և պարտականությունները սահմանվում են ՈՒԽ կանոնադրությամբ:

3.4. ՈՒԽ անդամի լիազորությունները կարող են դադարեցվել՝

1. Իր դիմումի համաձայն
2. Խորհրդի անդամի անգործության հիմնավորմամբ
3. Այլ բուհ տեղափոխվելու
4. Ուսանողի կարգավիճակը դադարեցնելու հետևանքով:

3.5. Ուսանողական խորհրդի որոշումները ընդունվում են խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե խորհուրդը դրա մասին այլ որոշում չի ընդունում: ՈՒԽ նախագահի և նրա տեղակալ(ներ)ի ընտրության և լիազորությունների դադարեցման, ՈՒԽ կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշումները ընդունվում են անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, եթե ձայների ավելի մեծ քանակ նախատեսված չէ:

3.6. Ուսանողական Խորհուրդը

1. Հաստատում է կանոնադրությունը և դրանում կատարում փոփոխություններ և լրացումներ: Կանոնադրության մեջ փոփոխություն կամ լրացում կատարելու մասին առաջարկությունները խորհրդի քննարկմանը ներկայացվում են ՈւԽ նախագահության կամ ՈՒԽ անդամների 1/3-ի կողմից:
2. Ընտրում ՈւԽ նախագահ, փոխնախագահ և քարտուղար, փակ քվեարկությամբ:
3. ՈւԽ նախագահը և տեղակալը հանդիսանում են ինստիտուտի կառավարման խորհրդի անդամներ:
4. Ձևավորում ՈւԽ մշտական հանձնաժողովներ
5. Հաստատում ՈՒԽ գործունեության տարեկան ծրագիրը
6. Հաստատում է ՈւԽ նախագահության, ֆակուլտետների և ուսանողական խորհուրդների, հանձնաժողովների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքային ծրագրերն ու աշխատակարգը:
7. Լսում և քննարկում ՈւԽ նախագահի տարեկան ֆինանսական, ֆակուլտետների խորհուրդների, հանձնաժողովի նախագահների հաշվետվությունները:
8. Ընտրում է ուսանողական խորհրդի պատվավոր նախագահի, պատվավոր անդամի կոչումներ:
9. Քննարկում է կանոնադրությամբ իր լիազորությունների սահմաններում նախատեսված այլ հարցեր և ընդունում համապատասխան որոշումներ, որոնց կատարումը պարտադիր է ուսանողական խորհրդի համար:

3.7. ՈւԽ դեկավար մարմինը ՈւԽ նախագահությունն է: Ի պաշտոն նախագահության անդամներ են հանդիսանում ՈւԽ նախագահ, փոխնախագահը, խորհրդականը, քարտուղարը, ֆակուլտետների խորհուրդների նախագահները, հետբուհական կրթություն ստացողների ներկայացուցիչը, մշտական հանձնաժողովների նախագահները:

3.8. Նախագահությունը նիստեր է հրավիրում առնվազն ամիսը մեկ անգամ: ՈւԽ նախագահի կամ նախագահության 1/3-ի պահանջովկարող են հրավիրվել արտահերթ նիստեր:

3.9. Նիստը համարվում է իրավազոր անդամների կեսից ավելիի մասնակցության դեպքում: Որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Հավասար թվով ձայների դեպքում խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է: Նախագահության նիստերը արձանագրվում են:

3.10. Կանոնադրությունը և կանոնադրության փոփոխությունները հաստատվում են անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3-ով:

3.11. ՈւԽ նախագահությունը.

1. Հաստատում է խորհրդի կանոնադրությունը և նրանում կատարում փոփոխություններ, որոնք այնուհետև հաստատվում են ինստիտուտի ռեկտորի կողմից: Կանոնադրության փոփոխությունների մասին առաջարկությունները խորհրդի նիստի քննարկմանը ներկայացվում են նախագահության կողմից կամ նվազագույն 10 անդամների գրավոր ներկայացմամբ:
2. Կազմակերպում է ՈւԽ գործունեությունը, քննարկում , նախապատրաստում խորհրդի նիստերի օրակարգը և կազմակերպում նիստերի անցկացումը:
3. Մշակում է ծրագրեր և նպաստում դրանց իրականացմանը☐
4. Խորհուրդի հաստատմանն է ներկայացնում ՈւԽ գործունեության տարեկան ծրագիրը☐
5. Քննարկում հանձնաժողովների, ֆակուլտետային ուսանողական խորհուրդների, խորհրդարանի մյուս կառուցվածքային ստորաբաժանումների ու մարմինների գործունեության հետ կապված հարցեր, հաստատում դրանց աշխատանքային պլանները և մյուս փաստաթղթերը
6. Լսում է ֆինանսական գործունեության մասին հաշվետվությունները և հաստատում դրանք☐
7. Հաստատում կամ չեղյալ է համարում խորհրդարանի անունից կնքված պայմանագրերն ու մյուս փաստաթղթերը☐
8. Քննարկում խորհրդի գործունեությանն առնչվող այլ հարցեր և ընդունում համապատասխան որոշումներ☐

3.12. ՈւԽ Նախագահը՝

1. Ղեկավարում է ՈւԽ աշխատանքը, վարում Ուսանողական խորհրդի և նախագահության նիստերը, ստորագրում ընդունված որոշումները☐
2. Տնօրինում է ՈւԽ ֆինանսական միջոցները,խորհրդին հաշվետվություն է ներկայացնում ֆինանսական ծախսերի մասին☐
3. Ներկայացնում է ՈւԽ-ն հաստատության և այլ մարմինների հետ փոխհարաբերություններում

4. Ընդունում է որոշումներ, տալիս հանձնարարականներ, հրավիրում է խորհրդակցություններ և իրականացնում ընդհանուր վերահսկողություն☐
5. Տարին մեկ անգամ ՈՒԽ գործունեության մասին հաշվետվություն է ներկայացնում Ուսանողական խորհրդին, հաստատության գիտական խորհրդին և ռեկտորին☐
6. Տալիս լիազորագրեր☐
7. Իրականացնում է հաստատության ՈՒԽ կանոնադրությունով իրեն վերապահված այլ լիազորություններ:
8. ՈՒԽ նախագահին ընտրվում է երկու ուսումնական տարի ժամկետով (նույն անձը կարող է վերընտրվել, սակայն ոչ ավելի քան երկու անգամ)☐

3.13. Խորհուրդը ունի փոխնախագահ, որը նախագահի բացակայության դեպքում փոխարինում է վերջինիս: Փոխնախագահը համակարգում է նաև ֆակուլտետների խորհուրդների, հանձնաժողովների աշխատանքները, կատարում ՈՒԽ նախագահի հանձնարարականները: Փոխնախագահը ընտրվում է խորհրդի կողմից

3.14. Նախագահի խորհրդականը, որը համակարգում է հանձնաժողովների և աշխատանքային խմբերի գործունեությունը, կատարումէ կազմակերպչական աշխատանքները:

3.15. ՈՒԽ քարտուղարը իրականացնում է կազմակերպչական աշխատանքներ, վարում է նիստերի արձանագրությունները, տնօրինում արխիվը, կազմակերպում գործավարությունը:

3.16. ՈւԽ գործունեությունը սույն կանոնադրության համաձայն կազմակերպելու նպատակով ստեղծվում են համապատասխան մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ, որոնք իրենց կազմից ընտրում են հանձնաժողովի նախագահներ:

3.17. Խորհրդի կազմում գործում են 4 հանձնաժողովներ՝ ուսումնական, մշակույթի և ազատ ժամանցի, լրատվության տեղեկատվությանև արտաքին կապերի:

3.18. Հանձաժողովները մշակում են իրենց աշխատակարգը և նախագահության վավերացմանն ներկայացնում խորհրդարանի նիստի հաստատմանը: Մշակում և նախագահությանն են ներկայացնում իրենց տարեկան աշխատանքային պլանները:

3.19. Ֆակուլտետային ուսանողական խորհուրդը ձևավորվում է ներկայացուցչական սկզբունքով՝ տվյալ ֆակուլտետի յուրաքանչյուր կուրսից ընտրված ուսանողներից:

3.20. Ֆակուլտետային ուսանողական խոհրդի անդամ կարող են ընտրվել բակալավրի կրթական ծրագրով1-ին կուրսի 1-ին կիսամյակը ավարտած ուսանողները, Ինչպես նաև մագիստրոսի կրթական ծրագրով սովորողները:

3.21. Ֆակոիլտետի ուսանողական խորհրդի անդամներն ընտրվում են կուրսերումբաց ընտրակարգով ձայների պարզ մեծամասնությամբ:

3.22. Ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահները հանդիսանում են Ուսանողական խորհրդի անդամներ, իսկ ֆակուլտետային ուսանողական խորհրդի նախագահը և նրա տեղակալ(ներ)ըուսանողական խորհրդի նախագահության անդամների պաշտոնե:

3.23. Ֆակուլտետային ուսանողական խորհրդի նախագահը և նրա տեղակալ(ներ)ը և քարտուղարը ընտրվում են ֆակուլտետային ուսանողական նիստումձայների պարզ մեծամասնությամբ:

3.24. Ֆակուլտետի ուսանողական խորհուրդի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահի, ֆակուլտետի ուսանողների 1/3-ի նաղաձեռնությամբ:

3.25. Ֆակուլտետային ուսանողական խորհուրդները՝

1. Վերահսկում և կազմակերպում են ուսանողների իրավունքների և պարտականությունների կատարումը:
2. Իրագործում են խորհրդարանի և նախագահության որոշումները:
3. Մշակում են իրենց աշխատակարգը և նախագահության վավերացմամբ ներկայացնում խորհրդարանինիստի հաստատմանը:
4. Մշակում և նախագահության հաստատմանն են ներկայացնում իրենց տարեկան աշխատանքային պլանները□
5. Նախաձեռնում և կազմակերպում է ֆակուլտետի սովորողների շրջանում միջոցառումներ, մրցույթներ□
6. Քննարկում ֆակուլտետի սովորողներին առնչվող այլ հարցեր□
7. Ամիսը մեկ անգամ անցկացնում ֆակուլտետային ուսանողական խորհուրդների ընդլայնված նիստեր , կուրսերի ավագների մասնակցությամբ
8. Կիսամյակը մեկ անգամ հաշվետվություն ներկայացնում ՌԻՍ խորհրդին կամ նախագահությանը:

4. Ֆինանսական միջոցները՝
   4.1. Խորհուրդը անվճար օգտվում է ինստիտուտի տարածքային , գույքային միջոցներից և նյութատեխնիկական սպասարկումից:
   4.2. ՌԻՍ ֆինանսական միջոցները գոյանում են հաստատության բյուջեից կատարվող հատկացումներից, նվիրատվություններից, հանգանակություններից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:
   4.3. Խորհրդի ֆինանսական և նյութական միջոցները տնօրինում է ՌԻՍ նախագահը կամ նրա կողմից լիազորված անձիք:
   4.4. Ֆինասական ծախսերի մասին նախագահը հաշվետվություն է ներկայացնում խորհրդին կամ նախագահությանը և ռեկտորին:
5. Լուծարումը՝
   5.1. Խորհրդարանը լուծարվում է ՀՀ օրենսդրությամբ և ինստիտուտի կանոնադրությամբ սահմանված կարգով:

Հաստատված է՝

ՌԻՍ ուսանողական խորհրդի նախագահ՝ Ս. Իվանյան

Ռեկտոր Լ. Վ. Անդրիասյան